



2021

**Տարեկան
հաշվետվություն**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՔ **04**

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ **06**

ՌԵԲՐԵՆԴԻՆԳ **07**

ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ ԵՎ
ԱՃԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱԺՆԵՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ **08**

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ **09**

ՓՄՁ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ **13**

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ **15**

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ **17**

«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ **18**

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵԶՄԵՆԹ» ՓԲԸ **20**

«ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ **22**

ԱՄՓՈՓ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ **24**

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՔ

Հարգելի գործընկեր,

2021թ.-ի մեկնարկը չափազանց բարդ էր և ծանր: Մեր երկիրը կանգնած էր 2020-ի արհավիրքների՝ հատկապես պատերազմի թողած տնտեսական վնասների վերականգնման առջև: Մեր բանկը, լինելով Հայաստանի առաջատար ֆինանսական կառույցներից մեկը, իսկ գյուղըրտում՝ ֆինանսավորման բացարձակ առաջատարը, ուժերի գերլարմամբ մեր գործընկերների հետ միասին լծվեց տնտեսության վերականգնման գործին:

Մենք նախաձեռնեցինք և մշակեցինք տնտեսությանն աջակցելու տարատեսակ փաթեթներ, իրականացրեցինք նոր ներդրումներ բազմաթիվ փոքր և միջին ձեռնարկատիրությունների կայունացման և ֆինանսական «առողջացման» նպատակով, ինչպես նաև տրամադրեցինք վարկային արձակուրդներ, զիջեցինք վարկեր: Այս մոտեցումը ցուցաբերեցինք նաև մեր ֆիզիկական անձ գործընկերների նկատմամբ: Մեր նպատակն էր, որ այս բարդ ժամանակահատվածում մեր ոչ մի գործընկեր իրեն միայնակ չզգա: Եվ մեզ մոտ դա ստացվեց:

Այս բարդ, երբեմն նաև անհաղթահարելի թվացող աշխատանքների շղթայում, մեզ համար չափազանց կարևոր էր մասնակից լինել նաև պատերազմի պատճառով առաջացած մեկ այլ խնդրի լուծմանը՝ աջակցել մեր Հայրենիքի համար միևնույն վերջ պայքար մղած ու հավերժացած տղաների ընտանիքներին, ինչպես նաև նպաստել վիրավորների առողջության շուտափույթ վերականգնմանը: Այս նպատակով, ինչպես նաև երկրում առաջացած այլ կարիքների լուծման համար, 2020թ.-ին մեկնարկեցինք և 2021թ.-ի ամբողջ ընթացքում շարունակեցինք աջակցել «Հայաստան» համահայկական հիմնադրամին և «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամին, առանձին աջակցություն տրամադրե-

ցինք ժամանակավորապես տեղահանված մեր հայրենակիցներին: Աջակցությանը միացան նաև Ակբա ֆինանսական խմբի մյուս անդամները՝ Ակբա Լիզինգն ու Ամունդի-Ակբա Ասեթ Մենեջմենթը:

Չնայած բոլոր դժվարություններին, 2021թ.-ի սկիզբն ինքներս մեզ համար սահմանեցինք որպես նոր մեկնարկի հնարավորություն: Տարեսկզբին իրականացրեցինք վերաբրենդավորում և հասարակությանը ներկայացանք նորովի: Նախաձեռնեցինք աշխատակիցների՝ Ակբա բանկի բաժնետեր դառնալու գործընթաց, որի շրջանակում Ակբա ֆինանսական խմբի աշխատակիցների շուրջ 75%-ը դարձավ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետեր: Որից հետո բանկն իրականացրեց բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխում՝ թողարկելով **500 հազար** հատ բաժնետոմս՝ ընդհանուր **7.5 մլրդ ԶԶ դրամ** ծավալով: Սահմանված ժամկետներում բաժնետոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվեցին, և Ակբան դարձավ Հայաստանում ամենաշատ բաժնետեր ունեցող ընկերություններից մեկը: Ցուցակվեցինք Հայաստանի ֆոնդային բորսայի ամենալիկվիդային **A** հարթակում:

2021թ.-ին մենք շարունակեցինք բանկի թվային տրանսֆորմացիայի գործընթացը: Թվային բանկինգի անդադար զարգացումը մեզ համար առաջնային տեղ է զբաղեցնում: Խելացի բանկինգ, թվային լուծումներ, իննովացիոն տեխնոլոգիաներ և նոր բիզնես մոդելներ: Այս ամենին մենք նոր զարկ տվեցինք 2021թ.-ի ընթացքում, ինչը մեծ մարտահրավեր էր, բայց, միաժամանակ, թույլ էր տալիս լավագույն հիմքի վրա ստեղծել նոր բիզնես լուծումներ: Ներդրեցինք առցանց վարկերի տրամադրման, ինչպես նաև ապառիկի և գյուղատնտեսական բիզնեսի վարկավորման ավտոմատ սքրիինգային համակարգեր, որոնք հաճախորդներին թույլ են տալիս անհամեմատ

մեծ արագությամբ ստանալ իրենց խնդիրների լուծումներն ու պատասխանները՝ խնայելով ահռելի ժամանակ:

Շարունակեցինք զարգացնել **acba digital** հարթակը: Բացի բանկային բազմաթիվ ծառայություններից օգտվելու հնարավորություններից, այն նաև հաճախորդի համար ժամանակակից «ֆինանսական գործիք» է, որը թույլ է տալիս հետևել և ներդրումներ կատարել արժեթղթերի շուկայում, վաճառել արդեն իսկ գնված արժեթղթերը: Այս և այլ նոր հնարավորություններն **acba digital**-ի օգտատերերին թույլ են տալիս բանկային և ֆինանսական ծառայություններից օգտվել ավելի պարզ ու հարմարավետ եղանակով:

Մեզ համար խիստ կարևոր էր ամրապնդել նաև միջազգային գործընկերների հետ մեր հարաբերությունները՝ նոր մակարդակի հասցնելով աշխատանքային գործընթացները: Այս համագործակցությունների շնորհիվ 2021թ.-ի ընթացքում մենք կարողացանք մեծածավալ միջոցներ ուղղել փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորմանը, ինչը տնտեսությանը նոր շունչ հաղորդելու լրացուցիչ խթան էր:

Պետք է նշել, որ 2021թ.-ին բանկն աջակցել է նաև կրթական, առողջապահական, մաքուր էներգիայի, օրգանական գյուղատնտեսության ոլորտներին, հաշմանդամություն ունեցող երեխաների խնդիրներով զբաղվող, ինչպես նաև գիտական և կրթական գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններին և հիմնադրամներին:

2022թ.-ին մենք կշարունակենք մեծ քայլերով առաջ շարժվել և գրանցել նոր՝ էլ ավելի նշանակալի հաջողություններ: Մեր ամբողջ թիմով միահամուռ ուժերով, հաղթահարելու ենք բոլոր մարտահրավերներն ու շարունակելու ենք առաջատար դիրքեր գրավել Հայաստանի ֆինանսական համակարգում: Մենք ցանկանում ենք միայն ու միայն զարգանալ, բարձրանալ էլ ավելի վեր, լինել ավելի արագ, լինել ավելի մարդակենտրոն, ավելի ճկուն, ավելի խելացի, ավելի հոգատար ու միասնական: Մեծ ոգեշնչմամբ ի գործ հանուն մեկ նպատակի՝ մեր երկրի:

Ոգեշնչված ձեզնով...

Գլխավոր գործադիր տնօրեն՝
Հակոբ Անդրեասյան



ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)	2020	2021		
Ընդհանուր ակտիվներ	495 631	546 930	9.4%	↑
Ընդհանուր պարտավորություններ	425 122	458 737	7.3%	↑
Սեփական կապիտալ	70 509	88 193	20.1%	↑
Շահույթ մինչև հարկում	3 774	12 366	227.7%	↑
Վարկային պորտֆել	303 018	341 295	12.6%	↑
Ավանդային պորտֆել	296 944	337 493	13.7%	↑
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾԸ				
Մասնաճյուղեր	62	63	1.6%	↑
Բանկոմատներ	191	182	-4.9%	↓
Կանխիկ ընդունման տերմինալներ	153	163	6.1 %	↑
POS-տերմինալներ	3 614	4 600	21.4 %	↑
ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ				
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ աշխատակիցներ	1 518	1 469	-3.4%	↓
Հաճախորդներ	353 982	372 165	4.9%	↑
«ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)				
Ընդհանուր ակտիվներ	27 978	39 854	29.8%	↑
Ընդհանուր պարտավորություններ	23 068	33 428	32.0%	↑
Սեփական կապիտալ	4 910	6 426	23.6%	↑
Շահույթ մինչև հարկում	269	1 798	85.0%	↑
Լիզինգային պորտֆել	25 017	31 477	20.5%	↑
«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)				
Ընդհանուր ակտիվներ	2 316	2 873	19.4%	↑
Ընդհանուր պարտավորություններ	310	383	19.1%	↑
Սեփական կապիտալ	2 006	2 489	19.4%	↑
Շահույթ մինչև հարկում	935	1 428	34.5%	↑

ՌԵՐԵՆԴԻՆԳ

2021թ.-ի սկիզբը բեկումնային և նշանակալից էր բանկի համար:

Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկը վերաբրենդավորվեց. այսուհետ՝ պարզապես **Ակբա**՝ կարճ, պարզ և հարազատ:

Երիտասարդ, ժամանակակից, Նորարար, ոգեշնչված ու ոգեշնչող. այսպիսին է Նոր Ակբան՝ Նոր էջից և Նոր շնչով, բայց լավագույն արժեքների ու ավանդույթների պահպանմամբ:

Նոր բրենդը լավագույնս արտացոլում է բանկի հարուստ պատմությունն ու խոստումնալից ապագան:


Նոր տարբերանշանը խորհրդանշում է բանկի պարուրածն զարգացումը, տարիների էական

փորձն ու կայուն աճը՝ դեպի Նոր բարձունքներ ու նվաճումներ:

Նոր կարգախոսի հիմքում ոգեշնչումն է, ինչը ևս բանկի պատմության ու բուն գաղափարախոսության հիմքում է:

Բանկը ստեծվել է ոգեշնչմամբ ու գործունեության 25 տարիների ընթացքում, չնայած բազում դժվարությունների ու մարտահրավերների, իրականացրել է անհնարին թվացող երազանքներ՝ մեկ համոզմամբ, որ ամեն բան լավ է լինելու:

Փոխվել է բանկի բրենդը, սակայն արժեքներն անփոփոխ են: Արժեքներ, որոնց հիմքում մարդն է, փոխօգնությունն ու հոգատարությունը:



ոգեշնչված ձեզնով
inspired by you

ԲԱԺՆԵՏՈՄԱՆԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՃԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱԺՆԵՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2021թ.-ը պատմական տարի էր Ակբա բանկի համար: Չնայած աշխարհաքաղաքական անկայունությանը և առողջապահական ճգնաժամի հետևանքով ստեղծված անբարենպաստ պայմաններին՝ բանկը կարողացավ մի շարք առանցքային կետերով գերազանցել շուկայի միջին կատարողականը, միաժամանակ զգուշորեն կառավարելով իր ռիսկերը, ինչպես նաև նախաձեռնել բանկի համար պատմական նշանակություն ունեցող մի շարք նախագծեր: Այս ամենը հնարավոր դարձավ բանկի խորհրդի և գործադիր մարմնի կողմից կառավարված փոխգործակցության և Ակբա խմբի բոլոր աշխատակիցների ամենօրյա նվիրված աշխատանքի արդյունքում:

Թեև նախորդ տարվա համեմատ 2021թ.-ին, ընդհանուր առմամբ, գրանցվեցին ավելի լավ տնտեսական պայմաններ՝ առողջապահական ճգնաժամը, հետպատերազմական իրավիճակը և աշխարհաքաղաքական անկայունությունը դեռևս պահպանեցին իրենց բացասական ազդեցությունը: Չնայած նշվածին՝ 2021թ.-ին Ակբա բանկը որոշ առանցքային ոլորտներում գրանցեց իր համար ռեկորդային ցուցանիշներ (զուտ բանկային եկամուտներ, շահույթ և այլն) և կարողացավ առանձին ցուցանիշներով գերազանցել շուկայում արձանագրված միջին կատարողականը (ակտիվների, կապիտալի, ավանդային և վարկային պորտֆելների, զուտ շահույթի և այլ ցուցանիշների աճ): Կարևոր է արձանագրել, որ այդ ամենը բացասական ազդեցություն չունեցավ բանկի ռիսկի պրոֆիլի վրա:

2021թ.-ին Ակբա բանկն իրականացրեց բաժնետոմսերի առաջնային տեղաբաշխում: Հպարտությամբ կարելի է նշել, որ բանկի և Հայաստանի ֆինանսական շուկայի զարգացման համար անչափ կարևոր և միևնույն ժամանակ համարձակ այս նախաձեռնությունը պսակվեց հաջողությամբ: Բանկը կարողացավ ամբողջությամբ տեղաբաշխել թողարկ-

ված 500 հազար հատ բաժնետոմսերը՝ ընդհանուր 7.5 մլրդ ՀՀ դրամ արժեքով: 2021թ. փետրվարի 1-ին Ակբա բանկի բաժնետոմսերը ցուցակվեցին Հայաստանի ֆոնդային բորսայում:

2021թ.-ի ընթացքում Ակբա բանկի խոշորագույն բաժնետեր Ակբա Ֆեդերացիայի աջակցությամբ իրականացվեց Ակբա խմբի աշխատակիցների բաժնետիրացման ծրագիր, որի արդյունքում Ակբա խմբի թվով 1116 աշխատակիցներ դարձան Ակբա բանկի բաժնետերեր՝ ձեռք բերելով Ակբա բանկի 147 530 հատ բաժնետոմսեր: Ծրագիրը նպատակ է հետապնդում խրախուսել աշխատակիցներին, ամրապնդել նրանց հավատարմությունը, բարձրացնել մոտիվացիան ու նրանց աշխատանքային նպատակները ներդաշնակեցնել Ակբա խմբի ռազմավարական նպատակների հետ:

2021թ.-ը նշանավորվեց նաև Խորհրդի կողմից բանկի կորպորատիվ կառավարման համակարգը բարելավելու հանձնառության ստանձնմամբ: Խորհուրդն իր այս դիրքորոշումը ձևավորել է այն գիտակցությամբ, որ լավ կառավարումը կարող է բանկի համար ստեղծել այնպիսի մրցակցային առավելություններ, ինչպիսիք են ավելի մեծ հասանելիությունն արտաքին ֆինանսավորմանը, կապիտալի ավելի ցածր, իսկ բանկի ավելի բարձր արժեքը, բարելավվող օպերացիոն կատարողականը, նվազ ռիսկերը և բոլոր շահագրգիռ կողմերի միջև հարաբերությունների բարելավումը: Նշված ծրագրի շրջանակներում արդեն իսկ մշակվել է բանկի կորպորատիվ կառավարման կանոնագիրը, որի հիմքում ընկած է սկզբունքների փաթեթ, որոնք շեշտում են լավ կորպորատիվ կառավարման արժեքը երկարաժամկետ կայուն հաջողության համար: Կիրառելով այդ սկզբունքները՝ Խորհուրդը պատրաստվում է իր ողջ հաշվետվական համակարգով ցույց տալ, թե ինչպես է իր կառավարումը նպաստում բանկի երկարաժամկետ կայուն հաջողությանը և ավելի լայն նպատակների իրագործմանը:

ՄԱՆՐԱԾԱԽ ԲԻԶՆԵՍ

2021թ.-ի ընթացքում բանկը լայնածավալ գործունեություն է ծավալել՝ մանրածախ բիզնեսի հաճախորդներին առաջարկելով նոր, ժամանակակից և կատարելագործված պրոդուկտներ: Միևնույն ժամանակ բանկը պարզեցրել, զարգացրել և ավտոմատացրել է վարկավորման գործընթացը՝ ապահովելով հաճախորդների թվի աճ:

2021թ.-ին բանկի մանրածախ բիզնեսի հաճախորդների թիվը հասել է 213 792-ի՝ նախորդ տարվա համեմատ աճելով 6.8%-ով:




ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ

Ակբա բանկն իր acba digital հավելվածի միջոցով մեկնարկել է **5G** սպառողական վարկերի տրամադրումը՝ ավտոմատացնելով վարկավորման ողջ գործընթացը:

Այդպիսով, **acba digital** հարթակի օգտատերերը ցանկացած վայրից հնարավորություն ունեն 24/7 ռեժիմով դիմել և վայրկյանների ընթացքում ստանալ մինչև **5 միլիոն 33 դրամ** սպառողական վարկ:

Սպառողական վարկերի ծավալը (մլրդ. 33 դրամ)




ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

Բանկը շարունակաբար ընդլայնում է իր գործընկերության շրջանակը՝ համագործակցության պայմանագրեր կնքելով կառուցապատող նոր ընկերությունների հետ: 2021թ.-ի ընթացքում բանկը համագործակցության պայմանագրեր է

կնքել 3 կառուցապատող ընկերությունների հետ, որի արդյունքում հիփոթեքային վարկավորման ծավալները 2020թ.-ի համեմատ ավելացել են ավելի քան **30%-ով**:

Հիփոթեքային վարկերի ծավալը (մլրդ. ՀՀ դրամ)



Փոփոխվել է նաև վերանորոգման հիփոթեքային վարկերի որոշումների կայացման ռազմավարությունը, և այժմ վարկավորման վերաբերյալ որոշումն ընդունվում է վարկունակության գնահատման սքրինգային համակարգի միջոցով:


ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՑԵԼ

2021թ.-ի տարեվերջի դրությամբ մանրածախ բիզնեսի հաճախորդներին բանկի կողմից տրամադրված վարկերի ծավալը կազմել է ավելի քան **120 մլրդ. ՀՀ դրամ**, որից սպառողական վարկերի ծավալը կազմել է ավելի քան **76 մլրդ. ՀՀ դրամ** (ներառյալ՝ ոսկու գրավադրմամբ վարկերը), ինչը մանրածախ բիզնեսի վարկային պորտֆելի գերակշռող մասն է կազմում (ավելի քան **63%**),

հիփոթեքային վարկերի ծավալը՝ **33 մլրդ. ՀՀ դրամ** ընդհանուր կշռի մեջ կազմելով **28%**, իսկ քարտերով տրամադրված վարկային գծերի ծավալը՝ շուրջ **11 մլրդ. ՀՀ դրամ**՝ ընդհանուր կշռի մեջ կազմելով **9%**:

Մանրածախ վարկերի կշիռը ընդհանուր վարկային պորտֆելի մեջ՝ **34.4%**. Նախորդ տարվա համեմատ աճել է **9.1%-ով**:

Մանրածախ հաճախորդներին տրամադրված վարկերի ծավալը (մլրդ. ՀՀ դրամ)




ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼ

Անհատների կողմից բանկում ներդրված ցպահանջ և ժամկետային ավանդների ծավալը

Նախորդ տարվա համեմատ աճել է **13.3%**-ով կազմելով շուրջ **204 մլրդ ՀՀ դրամ**:

Մանրածախ բիզնեսի ավանդային պորտֆել
(մլրդ ՀՀ դրամ)



ՆՈՐ ԲԱՐՏԱՏԵՍԱԿՆԵՐ

Visa Signature

2021թ.-ին Ակբա բանկը թողարկել է Նոր՝ **Visa Signature** պրեմիում դասի բանկային քարտը: Visa Signature քարտը, բացի իր ստանդարտ գործառնություններից, ճամփորդող քարտապաններին տրամադրում է նաև լրացուցիչ ծառայությունների լայն փաթեթ:

Visa Signature քարտապաններին հասանելի են հետևյալ առավելությունները՝

- Բժշկական ապահովագրություն ճանապարհորդության ընթացքում,
- Գնումների ապահովագրություն,
- Ապահովագրություն ճանապարհորդական անհարմարավետություններից,
- Մուտք աշխարհի ավելի քան 1000 օդանավակայաններում գործող VIP սպասասրահներ,
- Concierge ծառայություն:

Visa Digital

Առաջին անգամ հայաստանյան շուկայում Ակբա բանկի կողմից ներդրվեց **Visa Digital** քարտային Նոր պրոդուկտը: Visa Digital քարտը հնարավոր է պատվիրել 24/7 ռեժիմով, դառնալ բանկի քարտապան հաշված ռուպեների ընթացքում և օգտվել քարտի բոլոր հնարավորություններից առանց քարտի ֆիզիկական առկայության:

Visa Digital-ի քարտապաններին հասանելի են հետևյալ առավելությունները՝

- Քարտն ակտիվացնելու համար բանկ այցելելու կարիք չկա,
- Քարտի տվյալները քարտապաններին տրամադրվում են acba digital օնլայն բանկինգ համակարգի միջոցով,
- Visa Digital քարտը պատվիրելիս հնարավոր է ընտրել քարտի ցանկալի դիզայնը՝ առաջարկվող հնարավոր տարբերակներից,
- Visa Digital քարտերով հնարավոր է իրականացնել առցանց տիրույթում գործառնություններ, որոնք չեն պահանջում քարտի ֆիզիկական առկայություն,
- Visa Digital քարտերով հնարավոր է կատարել NFC վճարումներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՅՈՒՄՆԵՐԻ ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿ

Ակբա բանկն առաջինը Հայաստանում գործարկել է քարտից քարտ միջազգային փոխանցումների Նոր ծառայություն հեռախոսահամարի միջոցով: Այսուհետ Նոր ծառայության շնորհիվ հնարավոր է **24/7 ռեժիմով** հեռախոսահամարի միջոցով

արտերկիր գումար փոխանցել և ստանալ: Ծառայությունից օգտվելու համար պարզապես անհրաժեշտ է ներբեռնել **acba digital** հավելվածը և ունենալ Ակբա բանկի կողմից թողարկված Visa կամ Mastercard տեսակի քարտ:


ՓՄՁ ԵՎ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԲԻԶՆԵՍ

Չաշվետու տարվա ընթացքում բանկը շարունակել է գործարար ոլորտին կայուն և հեռանկարային աջակցություն ցուցաբերելու իր քաղաքականությունը: Մշտապես ուշադրության կենտրոնում պահելով և կարևորելով բիզնեսի կառավարման համար գիտելիքների փոխանակման ռազմավարությունը՝ բանկը շարունակում է տարիների ընթացքում կուտակած փորձի փոխանցման նպատակով ՓՄՁ-ների համար դասընթացների անցկացումը:


ՓՄՁ ակտիվ հաճախորդների թիվը 2021թ.-ին նախորդ տարվա համեմատ աճել է 11.19%-ով:

2021թ.-ի ընթացքում իրավաբանական անձ հաճախորդներին տրված վարկերի ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է շուրջ **40%-ով**՝ կազմելով **90 մլրդ ՀՀ դրամ**, իսկ վարկային պորտֆելն աճել է շուրջ **10%-ով**՝ կազմելով **121 մլրդ ՀՀ դրամ**:

ՓՄՁ հաճախորդների վարկային պորտֆել (մլրդ ՀՀ դրամ)



ՓՄՁ հաճախորդների ավանդային պորտֆել (մլրդ ՀՀ դրամ)



ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2021թ. ընթացքում ևս բանկը շարունակել է մասնակցել Կառավարության կողմից իրականացվող կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման, ինչպես նաև վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերին:

■ Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների շրջանակում տրամադրվել է **26 վարկ՝ 962 մլն 33 դրամի** չափով,

ինչպես նաև 9 շահառուի համար իրականացվել է շուրջ **224 մլն 33 դրամի** վարկի գրաֆիկի հետաձգում:

■ Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում տրամադրվել է **99 վարկ՝ 1,562 մլրդ 33 դրամի** չափով:

ԲԻԶՆԵՍ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՓՄՁ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանում ՓՄՁ-ների զարգացման համար Ակբա բանկը շուրջ 8 տարի կազմակերպում և անցկացնում է անվճար բիզնես դասընթացներ: Այդ դասընթացների անցկացման ընթացքում ուշադրության կենտրոնում մշտապես լինում են նաև ՀՀ մարզերը:

Բիզնեսն ավելի արդյունավետ կառավարելու նպատակով դասընթացների մասնակիցները ստանում են Նոր գիտելիքներ տարբեր ուղղություններով սկսած դրամական հոսքերի կառա-

վարումից մինչև ֆինանսական ճիշտ որոշումների կայացում, գործնական ու թվային մարքեթինգ, ծախսերի վերահսկողություն, հյուրատնային անձնակազմի մոտիվացիա, հոգատարություն հյուրերի հանդեպ և այլն:

Այս տարի բանկի կողմից անցկացվել է **15** դասընթաց ավելի քան **160** ձեռնարկությունների ղեկավարների ու աշխատակիցների համար. ընդհանուր շուրջ **260** մասնակից:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ

Ակբա բանկը, մշտապես կարևորելով գյուղատնտեսության կայուն զարգացումը, այս տարի ևս շարունակում է խթանել ոլորտի զարգացումը՝ առաջարկելով ֆինանսավորման արդյունավետ լուծումներ, ինչպես նաև շարունակելով Կառավարության հետ համատեղ իրականացվող ծրագրերը:

2021թ.-ի տարեվերջի դրությամբ՝ գյուղատնտեսական ոլորտի հաճախորդների թիվը կազմել է 84 829՝ նախորդ տարվա համեմատ աճելով 836-ով:


■ 2021թ.-ի ընթացքում շարունակվել է բանկի և Կառավարության համագործակցությունը. բանկի գյուղատնտեսական վարկերի ավելի քան **73%-ը** կազմել են Պետական աջակցության ծրագրերով տրամադրված վարկերը:

■ Գյուղատնտեսական ոլորտի վարկավորման գծով բանկը պահպանել է իր առաջատարի դիրքերը՝ կազմելով շուկայի շուրջ **44%-ը:**


■ Գյուղատնտեսական ոլորտի հաճախորդների վարկային պորտֆելը նախորդ տարվա համեմատ աճել է **11%-ով՝ կազմելով 108 մլրդ 33 դրամ**, իսկ բանկի պորտֆելում գյուղատնտեսական վարկային պորտֆելի տեսակարար կշիռը կազմում է **31.5%:**

■ Գյուղատնտեսական ոլորտի հաճախորդների ավանդային պորտֆելը տարեվերջին կազմել է ավելի քան **20 մլրդ 33 դրամ** նախորդ տարվա համեմատ աճելով **37%-ով:**

Գյուղատնտեսական ոլորտի հաճախորդների վարկային պորտֆել (մլրդ 33 դրամ)



Գյուղատնտեսական ոլորտի հաճախորդների ավանդային պորտֆել (մլրդ 33 դրամ)



ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է բանկի և Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) համագործակցությունը:

2015թ.-ին մեկնարկած այս համագործակցության շնորհիվ գյուղատնտեսները Հայաստանում հնարավորություն ունեն մասնակցելու բանկի և NABU-ի համատեղ «Օրգանական գյուղատնտեսության զարգացում» ծրագրին, որի հաղթողները ստանում են օրգանական սնունդ արտադրողի հավաստագիր: Բանկի և

NABU-ի համատեղ ծրագրի շրջանակում հաղթող ճանաչված կազմակերպությունները, ֆերմերներն ու գյուղատնտեսները հավաստագրումից հետո հնարավորություն են ստանում զգալիորեն մեծացնել իրենց արտադրանքի արտահանման հեռանկարները:

Այս տարի ծրագրի աջակցությամբ հավաստագրում է ստացել **18** ՓՄՁ և անհատ տնտեսվարող, իսկ ծրագրի գոյության ողջ ընթացքում՝ շուրջ **100** տնտեսվարող:

ՆՈՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹՎԱՅՆԱՅՈՒՄ

2021թ.-ի ընթացքում Ակբա բանկը՝ շարունակելով ժամանակակից թվային բանկային ծառայությունների ներդրման և զարգացման ռազմավարությանը, իր հաճախորդներին ներկայացրել է մի շարք նոր հնարավորություններ և ծառայություններ, որոնց շնորհիվ էականորեն կրճատվել են որոշ գործառնական ծախսեր և գեներացվել են ոչ տոկոսային հավելյալ եկամուտներ:

Հաշվետու տարում **acba digital** համակարգում ներդրվել են հետևյալ հնարավորությունները և ծառայություններ, մասնավորապես.

- ▶ **Փոխանցում բանկոմատին.** այս ծառայության շնորհիվ acba digital-ի օգտատերերը սեփական հաշիվներից անքարտ կանխիկացում կատարելու, ինչպես նաև բանկոմատի միջոցով այլ անձանց կանխիկ գումարներ փոխանցելու հնարավորություն ունեն:
- ▶ **Հղումով փոխանցում.** այս ծառայության շնորհիվ acba digital-ի օգտատերերը նախապես գեներացված հղման միջոցով կարող են ստանալ դրամական միջոցներ իրենց մտերիմներից կամ գործընկերներից:
- ▶ **Գումարի հարցում.** այս նորարարական ծառայության շնորհիվ օգտատերերը կարող են կատարել գումարի մասնատում և ստացում այլ անձանցից:

Նմանատիպ լուծումներն Ակբա բանկում նորարարությունների ներդրման, անդադար զարգացման և կատարելագործման, ինչպես նաև Հայաստանում անհպում վճարումները խթանելու շարունակական գործընթացի մի մասն են:

- ▶ **Կոնտակտով և QR-ով փոխանցում.** այս ծառայության շնորհիվ Ակբա բանկի հաճախորդները կարող են միմյանց փոխանցել գումար ընդամենը հեռախոսահամարի միջոցով կամ համապատասխան հաշվի QR սքանավորմամբ:
- ▶ **Հեռահար եղանակով բաժնետոմսերի ձեռքբերում.** սեպտեմբերին բանկի կողմից թողարկված 500 հազար բաժնետոմսերի տեղաբաշխումը Հայաստանում առաջին անգամ իրականացվեց հեռահար եղանակով՝ acba digital հարթակի միջոցով:
- ▶ **5G օնլայն վարկեր.** acba digital հարթակի օգտատերերին է ներկայացվել 24/7 ռեժիմով աշխատող սպառողական 5G վարկեր:

Վերոնշյալ ծառայությունների և պրոդուկտների ներդրման շնորհիվ է, որ դեռևս 2020թ. աշնանը թողարկված acba digital համակարգի օգտատերերի քանակը 2021թ. տարեվերջին արդեն գերազանցում է 200,000 օգտատերը, իսկ կատարված գործարքների թիվը հատել է **2 միլիոնը**, ինչը նշանակում է, որ հաճախորդների զգալի մասն օգտվում է բանկի ծառայություններից՝ առանց բանկի մասնաճյուղեր այցելելու:

2021թ.-ին Ակբա բանկը Հայաստանում առաջին անգամ Visa քարտապանների համար հնարավորություն է ստեղծել կատարելու անհպում, արագ և NFC տեխնոլոգիայով վճարումներ Garmin ապրանքանիշի սմարթ ժամացույցների միջոցով:

«ԱԿԲԱ ԼԻՉԻՆԳ» ՎԿ ՓԲԸ

Ակբա Լիզինգը տարիներ շարունակ հայաստանյան լիզինգային շուկայի բացարձակ առաջատար է: 2021թ.-ն ևս բացառություն չէր, և Ակբա Լիզինգը կրկին պահպանել ու ամրապնդել է դիրքերը շուկայում: Վերջինիս անուղղակի ապացույցն ընկերության՝ 33 լիզինգային շուկայում շուրջ **53%** մասնաբաժինն է:

ԳՐԻՆ ԼԻՉԻՆԳ

2021թ.-ի ընթացքում Ակբա Լիզինգն իրականացրել է 8 մլրդ 33 դրամի «կանաչ» նախագծերի ֆինանսավորում շարունակելով «Գրին Լիզինգ» ենթաբրենդի միջոցով գրանցել բարձր ցուցանիշներ՝ «կանաչ» ներդրումների ծավալը հասցնելով **13.7 մլրդ 33 դրամի**, որը կազմել է լիզինգի գործող պորտֆելի ավելի քան **43%**-ը:

2021թ.-ին Ակբա Լիզինգն ակտիվ ֆինանսավորում է իրականացրել գյուղատնտեսության ոլորտում. պետական սուբսիդավորման ծրագրի շրջանակում իրականացրել է **475** նախագիծ: Ակբա Լիզինգը ընդհանուր առմամբ տրամադրել է գյուղտեխնիկայի և ագրոպարենային սարքավորումների մոտ **14.3 մլրդ 33 դրամի** չափով լիզինգ:

«ԱԿԲԱ ԼԻՉԻՆԳ» ՎԿ ՓԲԸ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻՉԻՆԳԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ


Արդյունավետ աշխատանքի, նոր համագործակցությունների և իրականացված նախագծերի շնորհիվ 2021թ.-ի տարեվերջին լիզինգի պորտ-

ֆելը կազմել է ավելի քան **32 մլրդ 33 դրամ** ապահովելով **15.11%** աճ նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ:

Լիզինգի ընթացիկ պորտֆել (մլրդ 33 դրամ)




2021թ.-ի լիզինգային պորտֆելի կառուցվածքն՝ ըստ տնտեսության ճյուղերի



Ծինարարություն	16.2%
Գյուղատնտեսություն	15.1%
Արտադրություն	15.0%
Ֆինանսական վարձակալություն	14.2%
Առևտուր	13.1%
Ծառայություններ	10.7%
Արտադրություն	8.9%
Տրանսպորտ	3.8%
Ավիափոխադրումներ	1.1%
ՋԷԿ-եր	0.9%
Կաշվե իրերի արտադրություն	0.1%
Այլ	0.9%

2021թ.-ի լիզինգային պորտֆելի կառուցվածքն ըստ մարզերի



Երևան	58.2%
Արմավիր	7.3%
Արարատ	7.4%
Ծիրակ	4.2%
Վայոց Ձոր	2.1%
Արագածոտն	5.0%
Լոռի	1.7%
Կոտայք	7.7%
Տավուշ	1.4%
Սյունիք	1.7%
Գեղարքունիք	3.3%

«ԱՄՈՆՂԻ-ԱԿՔԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ

«Ամոնղի-Ակբա Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն (Ամոնղի-Ակբա) հիմնադրվել է 2013թ.-ին՝ «ԱԿՔԱ ԲԱՆԿ» ԲԲԸ և Եվրոպայի առաջատար ակտիվների կառավարիչ, ֆրանսիական Ամոնղի բաժնետիրական ընկերության կողմից՝ համապատասխանաբար **49%** և **51%** բաժնեմասնակցությամբ:


Ավելի քան **2 տրիլիոն եվրո** ակտիվներ կառավարելով՝ Ամոնղին Եվրոպայի 1-ին ակտիվների կառավարիչն է, և իր ուրույն տեղն է զբաղեցրել ակտիվների կառավարիչների աշխարհի խոշորագույն տասնյակում¹:

Ամոնղին ունի գրասենյակներ աշխարհի **36** երկրում, իսկ տարածաշրջանում՝ միայն Հայաստանում:

Ամոնղի-Ակբա Ասեթ Մենեջմենթը Հայաստանում կառավարում է միայն պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդեր՝ հիմնվելով ֆրանսիական Ամոնղիի առաջադեմ փորձառության և ֆոնդերի կառավարման ոլորտում մասնագիտական ու տեխնիկական աջակցության վրա:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ամոնղի-Ակբան կառավարման ներքո ունի շուրջ 248 մլրդ ՀՀ դրամ ակտիվներ:

Ակտիվների մեծությունը (մլրդ. դրամ)



¹ Համաձայն 2021թ. հունիսին հրապարակված IPE "Top 500 asset managers" (Թոփ 500 ակտիվների կառավարիչներ) ամսագրի տվյալների:

Չնայած համաշխարհային քաղաքական և տնտեսական բարդ իրավիճակին 3 կուտակային կենսաթոշակային ֆոնդերն էլ արձանագրել

են դրական եկամտաբերություն՝ ապահովելով **7.6% - 8.5%** միջին տարեկան եկամտաբերություն ստեղծման պահից:

Ֆոնդերի եկամտաբերություն

Ֆոնդ	Միջին տարեկան եկամտաբերություն	2021	2020	2019
Հավասարակշռված	8.2%	3.6%	10.6%	12%
Պահպանողական	8.5%	3.1%	10.7%	13%
Կայուն եկամտային	7.6%	1.5%	9.8%	10%

2021թ.-ն Ամունդի-Ակբայի համար աննախադեպ էր. ընկերության և ՎՋԵԲ-ի համառ ջանքերի շնորհիվ նույնբերին Հայաստանում առաջին անգամ ստորագրվել է սվոփերի և դերիվատիվների միջազգային ասոցիացիայի (ISDA®) 2002թ.-ի Գլխավոր Համաձայնագիրը, որը հրատարակվել է ISDA®-ի կողմից՝ ներառյալ 1995թ.-ի Վարկային Աջակցության Հավելվածը, որը թույլ է տալիս իրականացնել արտարժույթի սվոփերի արտաբորսային գործարքներ:

Այս գործարքը կողմերին թույլ է տալիս.

- ▶ Հեջավորել Ամունդի-Ակբայի կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերի արտարժույթային ռիսկը,
- ▶ Նպաստել ՀՀ տնտեսության զարգացմանը՝ ՎՋԵԲ-ին լրացուցիչ հնարավորություն տրամադրելով ՀՀ դրամով ֆինանսավորում իրականացնել երկրի ներսում՝ իր հաճախորդների հետագա վարկավորման նպատակով,
- ▶ Նպաստել Հայաստանում ածանցյալների և կապիտալի շուկաների զարգացմանը՝ արտարժույթային սվոփերի շնորհիվ:

«ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ

Ակբա Ֆեդերացիան Ակբա բանկի ամենախոշոր բաժնետերն է, որի մասնակցության չափը բանկի կապիտալում կազմում է 84%:

Հաշվետու տարվա ընթացքում Ակբա Ֆեդերացիան շարունակել է իր գործունեությամբ նպաստել ավանդական փոքրածավալ գյուղատնտեսական արտադրությունից անցումը դեպի ժամանակակակից, տեխնոլոգիապես հագեցած, բարձր ավելացված արժեք ստեղծող գյուղատնտեսություն:

ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Ակբա Ֆեդերացիան գիտակցում է, որ գյուղական բնակավայրերն առավել բարեկեցիկ դարձնելու նպատակով անհրաժեշտ է դիվերսիֆիկացնել գյուղացիական տնտեսությունների եկամուտները: Այս նպատակով Ֆեդերացիան համագործակցում է գերմանական NABU բնապահպանական կազմակերպության հետ՝ խթանելով գյուղական տուրիզմի զարգացումը, ինչը Ակբա Ֆեդերացիան դիտարկում է որպես գյուղական համայնքների զարգացման կարևոր ուղղություններից մեկը:

Հաշվետու տարվա ընթացքում, 2019թ.-ից մեկնարկած այս ծրագրի շրջանակներում քննարկվել են 300-ից ավելի հայտեր: Արդյունքում՝ աջակցություն է տրամադրվել առավել ուշագրավ 7 ծրագրերի:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Նորարար գաղափարների զարգացման կարևորությունը արժևորելով՝ Ակբա Ֆեդերացիան Իմփաքթ Յաբ միջազգային կազմակերպության հետ ստեղծել է գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման ստարտափ հարթակ: Ծրագիրը ուղղված է գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման ոլորտում նորարարական գաղափարներ ունեցող երիտասարդներին աջակցելուն: Ընդհանուր առմամբ աշխատանք է տարվել 26 թիմերի հետ, որոնցից 9-ի հետ՝ 2021թ.-ի ընթացքում: Ընտրված ստարտափ թիմերի աստիճանական և

արդյունավետ զարգացումը կարևորելով 2021թ.-ի ընթացքում կազմակերպվել են 6 հիմնական թեմաներով դասախոսություններ, հանդիպումներ և գաղափարների քննարկումներ պոտենցիալ ներդրողների հետ:

Գնահատելով Հայաստանի հեռավոր մարզերի զարգացման կարևորությունը՝ 2021թ.-ին Ակբա Ֆեդերացիայի և ԵՄ աջակցությամբ հիմք է դրվել Սյունիքի մարզի Գորիս քաղաքում Իմփաքթ Յաբի ստեղծմանը, որի բացումը տեղի կունենա 2022թ.-ի ընթացքում: Մենք կարևորում ենք երիտասարդների ոգեշնչող աշխատանքները, որոնք ուղղված են ստարտափ գաղափարների իրականացմանը: Այս աննախադեպ ծանր ժամանակաշրջանում մեր երիտասարդ թիմերի անդամները Հայաստանի տնտեսության զարգացման ամուր հենասյուներն են:

ԶԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԶԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴՏՏ

Կարևորելով գյուղատնտեսության ոլորտի զարգացման համար երիտասարդ կադրերի պատրաստման նշանակությունը՝ Ֆեդերացիան համագործակցում է նաև Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի հետ:

Հաշվետու տարվա ընթացքում Ակբա Ֆեդերացիան աջակցել է զարեջրագործության և մրգային օղիների թորման արտադրամաս-լաբորատորիայի ստեղծմանը, որի բացումը նախատեսվում է իրականացնել 2022թ.-ի առաջին եռամսյակում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Հաշվետու տարվա ընթացքում գործարկվել է փոքր և միջին գինեգործական ընկերությունների պրոդուկտների արտահանումը խթանող եռալեզու կայք: Նախագծի ներդրման ընթացքում փորձարկվել են 81 արտադրողների գինիները: Ընտրվել են 21 արտադրողների ընտրանուց 56 տեսակի գինիներ: Այս նախաձեռնության շրջանակում վարձակալվել է պահեստային տարածք Բեռլին քաղաքում և կազմակերպվել

ընտրված գինիների խմբաքանակի բեռնափոխադրում Հայաստանից Բեռլին:

Ակբա Ֆեդերացիայի մասնակցությունն այս համատեղ ծրագրին հնարավորություն է տալիս բանկին ներգրավել հաճախորդ չհանդիսացող գինի արտադրող ընկերություններ և հետագայում առաջարկել նաև արտահանման համար նախատեսվող բանկային պրոդուկտներ:

ԹՎԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ

Ակբա Ֆեդերացիան միտված է աջակցել գյուղատնտեսության ոլորտի թվայնացմանը: Այս նպատակով Ֆեդերացիան շարունակել է **Koriz** բջջային հավելվածի զարգացմանն ու կատարելագործմանն ուղղված աշխատանքները: 2021թ.-ի դրությամբ բջջային հավելվածի միջոցով վաճառող ֆերմերների թիվը կազմել է **204**, գրանցվել է **2742** օգտատեր և ներկայացվող արտադրանքների թիվը կազմել է **2214**:

2021թ.-ի Ֆեդերացիան թողարկել է նաև Koriz հավելվածի ինտերնետային կայքէջը՝ **koriz.app** անվանումով:

Ակբա Ֆեդերացիան այս դժվարին ժամանակաշրջանում պատրաստակամ է շարունակել իրականացնել իր առաքելությունը Հայաստանի գյուղատնտեսության և գյուղական համայնքների զարգացման գործում՝ պահպանելով նորարական գյուղատնտեսության ներդրման և արդյունավետության բարձրացման սկզբունքները: Այս գործունեությունը նպատակաուղղված է բարձրացնելու Ակբա Ֆեդերացիայի շահառու անդամ հանդիսացող գյուղացիական տնտեսությունների մրցունակությունն ու եկամտաբերությունը:



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+ 374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ և Ինգ Յանգ» ԲԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. + 374 (10) 500 790
+ 374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«ԱԿԲԱ Բանկ» բաց բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են «ԱԿԲԱ Բանկ» բաց բաժնետիրական ընկերության և նրա դուստր ընկերությունների (միասին՝ «խումբ») 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ամբողջական համախմբված ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով, կից համախմբված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր Էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Հետևաբար, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2022թ. ապրիլի 27-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք: Այդ եզրակացությունը ներառում է նաև տեղեկատվություն աուդիտի առանցքային հարցերի վերաբերյալ:



**Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ**

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» (վերանայված) աուդիտի միջազգային ստանդարտ 810-ին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած համախմբված ֆինանսական հաշվետվություններին:

«Էրնսթ ընդ Յանգ» ԲԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր՝

Ս. Երանյան

Մարիա Իգնատևա

Գլխավոր տնօրեն՝

Իսախանյան



Էրիկ Չայրապետյան

27 ապրիլի, 2022թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ
(հազար ՀՀ դրամ)

	2021թ.	2020թ.
Ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	96,447,988	66,398,135
Առևտրային արժեթղթեր	433,697	319,353
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	38,625	250,207
Պահանջներ բանկերի նկատմամբ	19,619,083	57,171,584
Ներդրումային արժեթղթեր	23,994,829	17,405,067
Հաճախորդներին տրված վարկեր	341,295,078	303,018,557
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	31,233,067	25,017,394
Ներդրումներ աստղիացված կազմակերպություններում	1,218,677	984,442
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	21,856,866	20,144,910
Այլ ակտիվներ	10,700,903	4,754,606
Հետաձգված հարկային ակտիվներ	91,722	167,436
	546,930,535	495,631,691
Ընդամենը ակտիվներ		
Պարտավորություններ		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	79,893
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,070,890	45,717
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	337,492,635	296,944,080
Թողարկված պարտքային արժեթղթեր	5,068,908	8,500,960
Այլ փոխառություններ	92,331,761	101,043,374
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով	1,187,740	126,703
Հետաձգված հարկային պարտավորություններ	1,296,678	680,497
Այլ պարտավորություններ	10,494,556	6,570,526
Ստորադաս վարկեր	9,794,000	11,130,839
	458,737,168	425,122,589
Ընդամենը պարտավորություններ		
Կապիտալ		
Բաժնետիրական կապիտալ	55,000,000	30,000,000
Էմիսիոն եկամուտ	2,500,000	-
Լրացուցիչ վճարված կապիտալ	2,452,257	-
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	3,479,525	2,946,536
Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	3,446,766	3,572,143
Չբաշխված շահույթ	21,314,819	33,990,423
	88,193,367	70,509,102
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	546,930,535	495,631,691

Ստորագրվել և վավերացվել է Բանկի Տնօրինության կողմից՝

Հակոբ Անդրեասյան




Գլխավոր գործադիր տնօրեն

Արմեն Հակոբյան



Գլխավոր հաշվապահ

27 ապրիլի, 2022թ.

Կից ծանոթագրությունը կազմում է ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
(հազար ՀՀ դրամ)

	2021թ.	2020թ.
Տոկոսային եկամուտ՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով	43,312,133	43,414,170
Այլ տոկոսային եկամուտ	3,498,291	2,675,996
Տոկոսային ծախս	(21,294,891)	(20,185,734)
Չուտ տոկոսային եկամուտ	25,515,533	25,904,432
Վարկային կորուստների գծով ծախսի հակադարձում / (Վարկային կորուստների գծով ծախս)	232,100	(10,774,703)
Չուտ տոկոսային եկամուտ վարկային կորուստների գծով ծախսից հետո	25,747,633	15,129,729
Միջնորդավճարների գծով եկամուտ	6,294,559	4,916,294
Միջնորդավճարների գծով ծախս	(2,510,554)	(1,868,608)
Չուտ օգուտ/(վնաս) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	560,811	(132,117)
Չուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	2,051,949	2,351,308
Ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս	579,024	399,958
Այլ եկամուտ	3,024,059	1,569,459
Ոչ տոկոսային եկամուտ	9,999,848	7,236,294
Անձնակազմի գծով ծախսեր	(14,567,050)	(10,888,617)
Մաշվածություն և ամորտիզացիա	(2,493,962)	(2,314,182)
Այլ գործառնական ծախսեր	(2,007,166)	(1,972,523)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(3,966,843)	(3,466,759)
(Արժեզրկման և պահուստների ձևավորման գծով այլ ծախսեր) / Ծախսերի հակադարձում	(95,529)	49,975
Ոչ տոկոսային ծախս	(23,130,550)	(18,592,106)
Շահույթ մինչև շահութահարկ	12,616,931	3,773,917
Շահութահարկի գծով ծախս	(2,803,449)	(1,049,286)
Հաշվետու տարվա շահույթ	9,813,482	2,724,631
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ		
Բազային և նուսրացված, մայր կազմակերպության բաժնետերերին վերագրելի, ՀՀ դրամ	1,840.03	544.93

Կից ծանոթագրությունը կազմում է ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ համախմբված հաշվետվություն
2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
(հազար ՀՀ դրամ)

	<u>2021թ.</u>	<u>2020թ.</u>
Հաշվետու տարվա շահույթ	9,813,482	2,724,631
Այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո		
<i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս</i> <i>վերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ՝</i> Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային ֆինանսական գործիքների գծով իրական արժեքի զուտ փոփոխություն	(226,739)	258,888
<i>Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական</i> <i>արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքների</i> <i>ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի</i> <i>փոփոխություններ</i>	304,374	92,348
<i>Շահութահարկ՝ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով</i>	<u>(13,974)</u>	<u>(63,222)</u>
Հաջորդ ժամանակաշրջաններում որպես շահույթ/(վնաս) վերադասակարգվող զուտ այլ համապարփակ եկամուտ	63,661	288,014
<i>Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս</i> <i>չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ՝</i> Շենքերի և փոխադրամիջոցների վերագնահատում Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող բաժնային գործիքների գծով (վնաս)/ օգուտ	660,910	-
<i>Շահութահարկ՝ այլ համապարփակ եկամտի տարրերի գծով</i>	<u>(253,375)</u>	<u>597,001</u>
<i>(73,356)</i>	<u>(73,356)</u>	<u>(107,460)</u>
Ընդամենը հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող այլ համապարփակ եկամուտ	334,179	489,541
<i>Ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ</i> <i>եկամտի բաժնեմաս՝</i> Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս չվերադասակարգվող	20,686	64,352
Ընդամենը ասոցիացված կազմակերպությունների այլ համապարփակ եկամտի բաժնեմաս	20,686	64,352
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ հարկումից հետո	418,526	841,907
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	10,232,008	3,566,538

Կից ծանոթագրությունը կազմում է ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ համախմբված հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
(հազար ՀՀ դրամ)

Ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվություններ

	Բաժնետիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Լրացուցիչ վճարված կապիտալ	Հիմնական սնուցների վերագնահատումը 9 ամ ց ամ	Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքների սնուցով չափվող ֆինանսական գործիքների վերագնահատման պահուստ	Գրաշիված շահույթ	Ընդամենը կապիտալ
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	30,000,000	-	-	3,009,091	2,730,236	32,903,237	68,642,564
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-	-	2,724,631	2,724,631
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	-	841,907	-	841,907
Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	-	841,907	2,724,631	3,566,538
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	-	841,907	2,724,631	3,566,538
Հիմնական սնուցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը գրաշիված շահույթին	-	-	-	(62,555)	-	62,555	-
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում	-	-	-	-	-	(1,700,000)	(1,700,000)
Հայտարարված շահագրավումներ	-	-	-	-	-	(1,700,000)	(1,700,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	-	-	(1,700,000)	(1,700,000)
2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	30,000,000	-	-	2,946,536	3,572,143	33,990,423	70,509,102
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	-	-	-	9,813,482	9,813,482
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	543,903	(125,377)	-	418,526
Այլ համապարփակ եկամուտ	-	-	-	543,903	(125,377)	9,813,482	10,232,008
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	-	-	-	543,903	(125,377)	9,813,482	10,232,008
Հիմնական սնուցների վաճառքի արդյունքում վերագնահատման ավելցուկի փոխանցումը գրաշիված շահույթին	-	-	-	(10,914)	-	10,914	-
Գործարքներ սեփականատերերի հետ՝ ուղղակիորեն գրանցված կապիտալում	-	-	-	-	-	(20,000,000)	-
Բաժնետիրական կապիտալի համարումը գրաշիված շահույթի հաշվին	20,000,000	-	-	-	-	(20,000,000)	-
Բաժնետիրական կապիտալի թողարկում	5,000,000	2,500,000	-	-	-	-	7,500,000
Հայտարարված շահագրավումներ	-	-	-	-	-	(2,500,000)	(2,500,000)
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	25,000,000	2,500,000	-	-	-	(22,500,000)	5,000,000
Բաժնետոմսերի հիման վրա վճարումներ	-	-	2,452,257	-	-	-	2,452,257
2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	55,000,000	2,500,000	2,452,257	3,479,525	3,446,766	21,314,819	88,193,367

Կից ծանոթագրությունը կազմում է ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ համախմբված հաշվետվություն

2021 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	2021թ.	2020թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	46,518,664	45,644,846
Վճարված տոկոսներ	(20,945,909)	(19,971,332)
Ստացված միջնորդավճարներ	6,429,127	4,992,954
Վճարված միջնորդավճարներ	(2,510,553)	(1,868,607)
Չուտ մուտքեր/ ելքեր շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	772,393	(132,117)
Չուտ մուտքեր փոխարժեքային տարբերություններից	2,918,840	2,147,112
Վճարված այլ գործառնական ծախսեր	(2,422,846)	(220,306)
Ստացված այլ եկամուտ	2,712,820	313,619
Աշխատավարձ և աշխատակազմին վճարված այլ գումարներ	(11,535,954)	(10,952,092)
Վճարված այլ ընդհանուր վարչական ծախսեր	(3,888,701)	(3,466,758)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	18,047,881	16,487,319
<i>Գործառնական ակտիվների զուտ (ավելացում)/սվազում</i>		
Առևտրային արժեթղթեր	(114,344)	(68,176)
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	(249,870)
Պահանջներ բանկերի նկատմամբ	37,508,706	(26,633,310)
Հաճախորդներին տրված վարկեր	(39,050,452)	(36,695,515)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարներ	(12,598,205)	(4,051,999)
Այլ ակտիվներ	(946,313)	990,943
<i>Գործառնական պարտավորությունների զուտ ավելացում/սվազում</i>		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	(79,831)	(120,116)
Բանկերի ավանդներ և մնացորդներ	1,019,240	13,660
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	40,137,417	42,136,691
Այլ պարտավորություններ	3,513,231	1,300,782
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված / (օգտագործված) գործառնական գործունեությունում մինչև շահութահարկը	47,437,330	(6,889,591)
Վճարված շահութահարկ	(1,086,784)	(1,226,755)
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ ստացված/ (օգտագործված) գործառնական գործունեությունում	46,350,546	(8,116,346)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(1,719,781)	(2,215,321)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքից մուտքեր	103,225	131,840
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(11,458,482)	(8,724,750)
Ներդրումային արժեթղթերի վաճառք և մարում	3,824,060	15,139,588
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված)/ ստացված ներդրումային գործունեությունից	(9,250,978)	4,331,357
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Բաժնետիրական կապիտալի թողարկումից մուտքեր	7,500,000	-
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	3,461,498	-
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(6,095,477)	(3,631,337)
Այլ փոխառությունների ներգրավումից մուտքեր	33,778,000	47,077,963
Այլ փոխառությունների մարումներ	(43,034,045)	(33,580,438)
Ստորադաս վարկերից մուտքեր	-	7,098,874
Ստորադաս վարկերի մարումներ	-	(950,933)
Վճարված շահաբաժիններ	(2,500,000)	(1,700,000)
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ (օգտագործված) /ստացված ֆինանսավորման գործունեությունում	(6,890,024)	14,314,129
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(84,277)	(53,199)
Արժեզրկման պահուստում փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(75,414)	6,943
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	30,049,853	10,482,884
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	66,398,135	55,915,251
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	96,447,988	66,398,135



acba.am | 010 31 88 88 |
Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

